


№ 49 կիրակի դեկտեմբերի 25 | հինգերորդ տարի 1894

Մ Շ Ո Ւ Հ Ի

## ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Ներկայ №-ով լրացաւ Տարազի հինգերորդ՝ ծանը, փորձուԹեան տարեշրջանը։

Վաղը Տարազը թևակոխում է իր վեցամեակը, իսկ Աղբիւրը՝ իր տասնևերեքերորդ տարին։

Տարազի 1895 թ. առաջին №-ը լոյս կը տեսնի յունուարի 1-ին առաջիկայ կիրակի, իսկ Աղբիւրը՝ չորհնէքին։

Տարազի № 1-ը կուղարկուի և Ներկայ 94 թ. մեր բաժանորդներին, որովհետև այդ №-ում գեռեզուած կըլինին ի Տէր հանգուցեալ Ալէքսանդր III մահուան առիԹով մեր խոստացած այն պատկերները, որոնք դեռ չեն տպագրուել։

Ներկայ №-ի հետ միատեղ պօստ յանձնուեց և Աղբիւրի 94 թ. վերջին №-ը։

Ծերենցի «Երկունք ի ններորդ դարու Սասունի կեանքից ազգային վէպը պօստ է յանձնուած պուտիրուած փաթեթնեըով՝ մինչև օրս 95 թ. մեր թերթերի բաժանորդներին և անյապաղ կուղարկուին այսուհետև գրուողներին։

Ուղարկուած են և Աղբիւր-Տարազի 8 պատկեր պրեմիաները նրանց, որոնք վճարել են 50 կոպ.

Շարունակուում է Աղբիւր-Տարազի 1895 թ.՝ բաժանորդագրուԹիւնը։

## ԽԱՉԱԳՈՂ-ԲԱՐԵԳՈՐԾՆԵՐ

—

*Բարեգործութիւնը* հայի դարաւոր գեղեցիկ յատկանիշներից մէկն է: Մեր գաղթօդների, եկեղեցիների, ընկերութիւնների գոյութիւնը դրա չօշափելի ապացոյցն է: Սակայն վերջին ժամանակները երևան է եկել բարեգործների մի նոր տիպար, որ հերքում ոչնչացնում է այն գեղեցիկ մարդասիրական սկզբունքը, որ կազմում է բուն բարեգործութեան հիմքը: Դա խաչագող կամ կեղծ բարերարների տիպարն է: Մեր հասարակական կեանքի բոլոր շրջաններում խաչագողի տիպարը արդէն յայտնի է: Դրականութեան մէջ նա կայ, մամուլի մէջ վաղուց գոյութիւն ունէ, իսկ գաղթօդական և եկեղեցական խաչագողների տիպարների դիմակը արդէն մասամբ պատռուած է:

Բարեգործական ասպարիզի խաչագողները աւելի թարմ երևոյթ են, և նրանց կատարեալ տիպարը նոր նոր սկսել է կազմուել: Փորձենք համառօտ նկարագրել այդ նոր երևան եկող տիպարի ճշգրիտ պատկերը:

Նա հարուստ է, և շատ ժամանակ չէ, որ հարստացել է: Նրա անցեալը պատած է մի թանձրը խաւարով, և ոչ ոքի համար հետաքրքրական չէ փարատել այդ խաւարը: Եւ ո՛ւմ ինչ փոյթ, որ նա անցեալում եղել է կամ մի հասարակ գիւղացի կամ խոհարար կամ նոյն իսկ մի բեռնակիր մշակ: Կարևորն այն է, որ մի օր նրա բախտի անիւը շուռ է եկել: Մութ անձնաւորութիւնը ընկել է մի շրջան, ուր գտել է փող վաստակելու դիւրին միջոցը: Թող այդ շրջանը լինի Բագուի նաւթային արդիւնաբերութիւնը կամ մի որև է կապալառուութիւն, առևտուր, կոմիսիոներութիւն կամ, թէկուզ, վաշխառուութիւնը, այդ չէ կարևորը, այլ այն, որ այսպէս կամ այնպէս նա հարստացել է և այսօր անուն ունէ հասարակութեան մէջ: Մի ճգնէք ապացուցանել, որ այսօրւայ հերոսը իր ոսկիները դիզել է իր նման մշակների արդար քրտինքով, որ նա եղել է կապալառութեան մէջ խարդախ, առևտուրի մէջ-նենգաւոր, որ նա գրկել է, կողոպտել է, հարստահարել է հազարաւոր մարդկանց դառն քրտինքի վաստակը: Կրկնում ենք, մի ճգնէք այդ բոլորը ապացուցանել. նախ, որ ոչ ոքի վրայ չեն ազդիլ ձեր ապացոյցները, երկրորդ, ձեզ կը համարեն չարամիտ, նախանձոտ, մանաւանդ, եթէ ձեր գրպանից ոսկիների ձայն չէ լսւում: Նայեցէք միայն ներկային: Տեսէք այժմ, թէ ինչպէս նախկին հարստահարիչը, վաշխառուն, քճնողը, շողոքորթը, պնակալիզը, այժմ ինքը շրջապատւել է շողոքորթներով, քճնողներով: Եւ ո՛վքեր են նրան շրջապատողները: Դուք կարծում էք գեհենիկ ամբոխը: Ոչ, այդպիսիների երկրպագութեան կարիք էլ չունէ մեր այժմեան հերոսը: Նա այժմ արհամարհում է իր նախկին շրջանը, նրա վրայից վաղուց արդէն թօթափւել է «հնութեան փոշին», և այնպէս ինչպէս ջուրը սագի փետուրներից: Նա այժմ ապահով է, իր գանձարանը լցրել է, նա այլևս չէ ուզում հարստահարել, փորը կուշտ է: Նա այժմ միայն մի ձգտումն ունէ—փառք վաստակել, վասն զի հարստութիւնը առանց հռչակի, առանց փառքի նրա աչքում այժմ շատ էլ մեծ հրապոյր չունէ: Եւ նա գիտէ, թէ որտեղ է վաճառւում ժամանագին փառքը: Մամուլ - ահա այն առաջին միջոցը, որ պէտք է հռչակի նրա անունը: Տեսէք, նա իրան շրջապատել է այդ մամուլի «սրժանաւոր ներկայացուցիչներով», հասարակական շահերի այդ «անկաշառ պաշտպաններով»: Առաջին պայման՝ պէտք է այդ գրգռող. ագուաններն բերանը մի քան ձգել: Մեր հերոսը գիտէ, որ այդ անհրաժեշտ է իր «փառքի» ճանապարհը բանալու համար: Նա գիտէ նաև, որ շատ էժան է ագուաններին կաշառելը, և կաշառում է: Միւս օրը ագուանները նրան հռչակում են «մամուլի պաշտպան», «բարերար», «մեցենատ»: Մեր հերոսը կարդում է իր մասին և հրճւում, հրճւում է և իր հոգու խորքում ծիծաղում շողոքորթների վրայ: Նա իրաւունք ունէ ծաղրելու, որովհետև տեսնում է, թէ որքան դիւրին է և էժան կաշառել «անկաշառ հասարակական գործիչներին»:

Բայց լոկ «բարերարի» անունով չէ շատանում մեր հերոսը: Այդ դեռ շատ քիչ է. նա ձգտում է և հասարակական կեանքի ասպարիզում դեր կատարել, «գործիչ» անուն վաստակել: Ես չեմ խօսում այնպիսիների մասին, որոնք մի գաղթօդի մի քանի շահի են նպիրում, որպէս զի հոգաբարձու ընտրւեն կամ խօսքավաճառ լրագրական միմոսներին մի քանի բաժանորդագին են վճարում, որպէս զի իրանց անունը տարւայ վերջում կամ սկզբում տպագրւի լրագրի էջերում: Այդպիսիների պատկերը արդէն բաւական յայտնի է հասարակութեանը: Դրանք, այսպէս ասած, մեր առօրեայ մանր մունր հերոսներն են: Ես խօսում եմ այն աւելի խոշոր հեռաւորի և աւելի զգրելի խաչագող-բարեգործների մասին, որոնք փող ունենալով, այն համոզմունքի են, թէ իրաւունք ունեն և կարող են նոյն

իսկ արմատական գաղափարների պարագլուխ ու թարգման Հանդիսանալ։ Դրանց արարքները ներկայացնում են կատարելապէս մի տրագիկոմիքական տեսարան։ Դրանք արդէն աշխատում են իրանց շրջապատել բուն գաղափարական մարդկանցով, ինտելլիգենցիայի այն դասով, որի ձգտումները ոչինչ առնչութիւն չունեն լրագրական գաճաճների մանր-մունր շահերի ու ձգտումների հետ և որոնց անկեղծութեանը և օգտակարութեանը միայն իրաւունք ունենք հաւատալու։ Եւ ահա տեսնում ես՝ ճարպիկ խաչագող-բարեգործը, օգտւելով այդ գաղափարական մարդկանց անկեղծութիւնից և հաւատից, սկսում է նրանց հետ անպատկառ կատակներ անել։ Կատակներ, ուր դեր է կատարում մի ամբողջ ժողովրդի վիճակը, մի թշւառ ազգի ճակատագիրը։ Մարդիկ խաբւում են այդ նախկին խոհարարի, կամ վաշխառուի և այժմեան խաչագող-բարեգործի գանազան սուտ ու պատիր խոստումներից և երդումներից։ Այդ սուտ երդումների հիման վրայ նրանք սկսում են օգային ամբոցներ կառուցանել։ Եւ յանկարծ մի օր պարզւում է, որ իրանք մոլորւած են, որ խաչագողը մի ձգտում է միայն ունեցել՝ մօտենալ գաղափարականներին, դեր խաղալ նրանց մէջ իր անունը փայլեցնելու համար։ Միամիտ մարդիկ նոր միայն հասկանում են, թէ ինչ տեսակ նորագոյն բարոյական ապազակի հետ են գործ ունեցել։

Այս բոլոր մեր ասածները տեսական դատողութիւններ չեն, այլ փաստերի վրայ հիմնւած դառն ճշմարտութիւն։ Քանիցս ես ինքս վկայ և ականատես եմ եղել այդ տեսակ փաստերին։ Ես տեսել եմ ոսկիների մի շրջուն տոպրակ, որի վերնայարկը այնքան գաւառկ է, որքան լիքն է նրա գրպանը, որ չըգիտէ երկու խօսք միմեանց հետ կապել և մի միտք արտայայտել և որի սիրտը, սակայն, լիքն է սնոտի փառամոլութեան ղղացումներով։ Եւ յանկարծ մի օր այդ մարդը, որ ազգերի կեանքի և ճգնաժամի մասին այն գաղափարն ունէր, ինչ գաղափար նա ունեցել է բազազխանի արշինի մասին, կրկնում եմ, յանկարծ մի օր այդ մարդը, գրպանը ոսկիներով լի ասպարէզ է ընկել և յանդգնել է ազգային առաքելի դեր կատարել։ Եղել են միամիտներ, որ հաւատացել են այդ մարդկանց և յետոյ խաբւել։ Բայց կարծում էք մի անգամ խաբւելը խելօքացրել է նրանց։ Ոչ, նրանք պատրաստ են այսօր էլ, վաղն էլ խաբւել։ Ինչո՞ւ— Որովհետև նախ խաբւողները շատ միամիտ են, անփորձ, երկրորդ, որ ամենագլխաւորն է, ազգային առաքելի դեր կատարողն է շատ ճարպիկ, խորամանկ, չը նայելով, որ նա արտաքուստ ձևանում է հասմեստ, միամիտ և անկեղծ։ Ես տեսել եմ այդ խաչագողների և ուրիշ մի քանի տիպարներ։—Կոլորակ մսի գնդեր, որոնք բացի իրանց որովայնի լայնութիւնից և պարանոցի հաստութիւնից, ոչ մի արժանաւորութիւն չեն ունեցել, բայց, այսու ամենայնիւ, աշխատել են ձևանալ, թէ իբր ընդունակ են բարձր գաղափարներով ոգևորւելու։ Ամենացաւալին այն է, որ ստրկահոգի, երկչոտ ինտելլիգենցիան ոչ միայն հաւատում է այդպիսիներին, այլ և շատերը իրանց համար պատիւ են համարում նրանց հետ մի սեղանի շուրջը նստել։ Վա՛յ այն հասարակութեանը, որի մէջ այդ խաչագողները կարողանում են գաղափարական դեր կատարել և վա՛յ այն ինտելլիգենցիային, որ այդպիսիների հետ է մի սայլի լծւում։

Ա. ՍԻՓԵԱՆ

---

# Ուրանիա

## ԵՐԿԻՆՔԸ ԵՒ ԵՐԿԻՐԸ

## II

## Iter extaticum coeleste

Այն ժամերը, այն օրերը որ ես նւիրում էի հոգեբանութեան և տիեզերագիտութեան այդ խնդիրների ուսումնասիրութեան, չէին արգելում ինձ դիտել Հրատը հեռադիտակով և վեր առնել նրանից աշխարհագրական նկարներ ամեն անգամ, երբ մեր մթնոլորտը շատ սև կամ ամպամած, թոյլատրում էր ինձ։ Եւ սակայն, պէտք է խմանալ որ ոչ միայն բոլոր խնդիրները շփւում են միմեանց բնութեան և գիտութիւնների ուսումնասիրութեան մէջ, այլ նաև միմեանց հետ, ի նկատի ունենալով որ պսիխիական տիեզերքը բնական նիւթական տիեզերք է, որ աստղագիտութեան առարկան յաւիտենական կեանքի երկիրների ուսումնասիրութիւնն է և որ մենք չենք կարող որևէ գաղափար կազմել այդ երկիրների մասին, եթէ մենք նրանց չըճանաչենք աստղագիտականօրէն։ Բայց ճանաչելիս լինենք թէ ոչ, իրօք, գալթեալ մենք բնակւում ենք հէնց նոյն իսկ այս բոլորին երկնքի մի գաւառում և նրա վրայի բոլոր էակները, յաւիտենականապէս երկնքի քաղաքացիներն են։ Իրերի գաղտնի

Ս. Հաւսիկ վտներ...

նախագուշակութեան պէտք է վերաբերել այն հանգամանքը, որ Հնութիւնը նկատում էր ՈՒՐԱՆԻԱՅԻՆ իբրև բոլոր գիտութիւնների Մուսայն։

Ուրեմն իմ միտքս երկար ժամանակ զբաղուած էր մեր դրացի Հրատ մոլորակով, երբ մի օր, մանգալով մի անտառի մէջ, յուլիսի տաք ժամերից յետոյ, նստեցի կաղնի ծառի տակ և շուտով նիրհեցի։

Տաքութիւնը ճնշող էր, ամեն կողմը լռութիւն էր տիրում. Սէն գետը կարծես կանգ էր առել իբրև մի ջրանցք հովտի մէջ։ Ես զարմացայ, մի քանի վայրկեան յետոյ քնից զարթնելով, երբ այլ ևս չըճանաչեցի տեղը, ոչ մօտակայ ծառերը, ոչ ևս ըլրակի ներքոյ հոսող վտակը և ոչ ևս ալեծուփ մարգագետինը, որ գնում անհետանում էր Հորիզոնի մէջ։ Արևը մայր էր մտնում, աւելի վոքր քան մենք սովոր ենք տեսնել։ Օդը դողում էր Երկրին անծանօթ ներգա շնակ ազմուկներից և թըռչունների նման մեծ միջատներ թռչկոտում էին անտերև, հսկայական կարմիր ծաղիկներով ծածկւած ծառերի վրայ։ Ես վերկացայ, մղւած զարմանքից, իբրև ուժանակից, և այնպիսի սաստիկ ոստիւնով, որ յանկարծ ոտքի վրայ կանգնած տեսայ ինձ և մի տարօրինակ թեթևութիւն զգայի։ Հազիւ մի քանի քայլ էի անցել, որ ինձ թւաց թէ մարմնիս ծանրութեան կէսից աւելի շոգիացել է քնած ժամանակ. այդ ներքին զգացումը աւելի խոր կերպով զարմացրեց ինձ քան իմ աչքիս առաջ կատարւած բնութեան կերպարանափոխութիւնը։

Հազիւ ես հաւատում էի աչքերիս և զգացումներիս։ Բացի դրանից, ես այլ ևս նոյն աչքերը չունէի, ես այլ ևս նոյն տեսակ չէի լսում և մինչև անգամ առաջին րոպէներում նշմարեցի

(Կըշարունակւի)

# գեղարուեստ

ԹԱՏՐՈՆ, ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

ԱՋԳԱՑԻՆ ԱՌԱՋԻՆ ՎԱՌԵՐԳԱՆՆ *) ԵՒ ԳՈՒՆՈՅԻ ՖԱՈՒՍՏՆ Ի ՓԻՆՁԻԱ

Նորաձայն անունս պէտ զայն մարմնացնող հանճարն իսկ թերևս չտեսրուն անծանօթ ըլլայ. բայց ազգոնեան քնարի դաշնակաւոր լարերու ձայնից հետ՝ ազգային երգոց վերածնութեան ևս հմուտ եղող մեկը չըպիտի դանդաղի գուշակել, զոր ինչ կուզեմ համառօտիւ գծել ասու։

Հոկտեմբերի վերջընթեր օրը,—յուրում երկրորդ գարունը բոլոր իր բարեխառն պայծառութեամբ դեռ կը թեւատարէր Վիենեկոյ աննման լճակին վրայ, և դշխոյն Ադրիականի իր հրապուրիչ գեղովն առ ինքն կըձգէր օտար երկրեայ եկաւորաց բազմութիւնը,—կարապաձև գոնդոլայի մէջ սահելով հայելանման ջրոյն երեսը, կղզեկիս այցելութեան կու գայր այն անծանօթն՝ որ մի քանի օր յառաջ Գունոյի հրաշալի թատերգութեան, այն է Ֆաուստի մէջ իբրև նշանաւոր վառերգակ՝ ամենուն ուշադրութիւնն իրան գրաւած էր։ Այդ անծանօթն էր նա ինքն պարոն Իէգլար Ամբրջանեան**). պարթևական հասակով մի առոյգանձն և համակրելի երիտասարդ, հազիւ 28—30 տարեկան. որ արամազդեան թռուխ յօնից ներքև կը վայլին երկու խոշորագեղ և կենդանի ականողիք, և որ իր ընտանի, բարեկիրթ և համեստ վարմունքով գիտէ չուտով ամենուն սիրելի և յարգելի ընել ինքը։

Տաղանդաւոր վառերգակիս բնութեամբ արդէն զարթ դիմաց վրայ կըփայլէր նոյնպէս սրտի մեծ գոհունակութիւն մի. վասն զի դեռ նոր ասպարէզ եւած Մեդիոլանու համբաւաւոր երաժշտանոցէն, հրաւիրւած էր ի Փիռճիա *), մասնակցելու Ֆաուստ թատերգութեան, և հոն խուռն հանդիսականաց սրտի և մտաց վրայ գործած ահագին ազդեցութեամբը՝ եօթնից կորզած էր արդէն ասրդենայ պսակները՝ Վալենտինի դերին մէջ. քաղաքացեաց կողմէն իրան առանձինն ի պատիւ տրւած թատերահանդիսիս և ընծայականներով

*) Հայերէն այս արտասանական բառս՝ յուշարէն թարգմանութեամբը կազմեցի, որ ծանր-հղանակ ալ կընշանակէ։ Հայերէն Վառ՝ որ փոխանակ ծանրի գործածւած է, տառադարձուցեր և մեր հնչեղական երգոց մէջ ի վար արկած են նախնիքը, այս պատճառաւ մենք ևս զայդ ընտրեցինք։ Եւրոպացիք Baritono, Վառերգ, բառով՝ փոխարերաբար երգիչը կըմանան հոս և ոչ թէ երգի տեսակը, քանի մենք ակ մանկին աւելացընելով վկայն։

**) Ծագումով Շուշեցի է, բայց ինքը Տվխենց ծնած ըլլալով՝ բնակարար Տվխենցոյն կըհամարի ինք զինքը։ Իր նախնական կրթութիւնը Ներսէսեան և Գէորգեան ճեմարաններում ստացած է, և հայերէն մաքուր և վարժ կերպով կըխօսի, թէպէտ և երեք տարի է որ արտասահման կըգտնուի։ Իր նախկին բնակութիւն էր Եկատերինոսլաւ, որուն համար նախապատրաստական դիւանագիտական ուսած է. բայց ի Պետերբուրգ՝ հայոց եկեղեցւոյն մէջ դպրապետութիւնն ըլած ժամանակին՝ տեղւոյն Սերաժշտանոցի տնօրէնի կողմէն եղած կրկին և կրկին յորդորներէն համոզւած, երաժշտական արհեստին ինք զինքը նուիրեց։ Այս ըսին՝ ի սկզբան շատ վշտալից եղաւ Ամբրջանեանի համար, վասն զի երկու տարի առանց դրամօժան մնաց, բայց յետոյ Ա. լեքսանդր Գ. Հանգուցեալ ողորմած կայսեր տէրութիւնը գնահատելով անոր տաղանդը, առանց խորհրդական ձեռք դրած անոր վրայ, և երեք տարի իր ծախսիւք Պետերբուրգի Սերաժշտանոցին մէջ ուսանելէն վերջ՝ յղեց ի Մեդիոլան, ուր ուսած արհեստը կատարելագործելու։

*) Այս փոքրիկ քաղաքս Վիենեկոյ հարաւային կողմը կըգտնուի, երկու ժամ հեռու. Ադրիականի ալիքներէն ամեն կողմ մին կըզատուին դաշտ։ Ունի 30—35 հազար բնակիչ։ Այս տեղ վախճանած է հայազգի Շէհրիմանեան ազնուական գերդաստանէն Սուրէն Դոմինիկոս Տոխատոսը, և պ. Ամբրջանեան հոս կու գար կենդանացնելու հայոց թատրոնի մեռած յիշատակը։

մեկնած էր դէպի Վենետիկ, յայցելութիւն կղզեկիս։

Ամիրջանեանի՝ Վաուասի եղերերգութեան մէջ ունեցած առաջին յաջողութեան արուեստագիտութեան վրայ գաղափար մի տալու համար Բոլոմավիսի ընթերցողաց, քաղելով դբ. Նենք աստ իտալական մի քանի թերթերու քննադատութիւնը։

«Ադրիականը»՝ (L'Adriatico N. 177) կըգրէր՝ օրերով յառաջ. «Կըչարունակեն յաջողութեամբ՝ ի Բիոճիա, Վաուասի ներկայացումները։ Վալենտինի դերն ստանձնած է նորամուտն Պր. Բէգլար Ամիրջանեան (հայազգի) որ ունի ձօրեղ միջոցներ, և այնպես կըթարգմանէ զայն, որ դուք կըկարծէք, թէ նա հին արուեստագէտ մէ։ Ասուած հղօր (Dio possente) մրմունջի մէջ, Վալենտինի մահուան պահուն, ուժգին ծափահարուեցաւ նա»։

«Վենետկոյ լրագիրը» (Gazzetta di Venezia N. 279). «պ. Բէգլար Ամիրջանեան՝ Վալենտինի տարազուց ներքև՝ այնպիսի պերճանքներ ցոյց տուաւ անսովոր արուեստագիտութեան, որ անդադար ծափահարուեցաւ»,

«Փաքը լրագիրն» (IlGazzetino N.270) «Նորամուտ է պ. Բէգլար Ամիրջանեան. բայց ամենահանճարեղ Վալենտինի դերին մէջ՝ Զայնը կորովի ը մեծածաւալ է. ինքնաբերաբար ձայնարձակումով մի կերդէ քաջղոր, և արուեստին մէջ հասունացած արուեստագիտի մի ճարտարութեամբ»։

«Խարազանը» (Lo Staffile. N. 23). «Մեզ համար յայտնութիւն մեր վառերդակն Բէգլար Ամիրջանեան, Վալենտինի տարազուք. բովանդակ եղերերգութեան մէջ ծափահարուեցաւ. իսկ մահուան մրմունջի ատեն՝ անչափ և որոտաձայն կայթիւք։ Ամիրջանեան երիտասարդն անսխալ երգող մէ ճոխացեալ ի բնէ տարածուղ ձայնիւ, ոյոյ բնորոշ յատկութիւնն է՝ անչափապէս համակրելի. նա ինքն իսկ է անթերի և ազդեցիկ դուսան մի, որ միշտ ախորժելի պիտի լինի՝ ուր ալ որ ներկայանալու ըլլայ»։

«Արուեստական աշխարհ» (Il Mondo artistico N. 47) որ կըհրատարակուի ի Մեդիոլան կըգրէ. «Բէգլար Ամիրջանեան՝ ամենալաւ աշակերտ՝ քաջ վարժապետին Յովհաննինիայ, սկսաւ հանդիսանալ Բիոճիայի թատերաբեմին վրայ, մասնակցելով երկու երեւելի եղերերգութեանց, այսինքն է Վաուասի և Պուրիտանի։ Իր յաջողութիւնն ամենափայլուն և կատարեալ եղաւ։ Վենետոյի բոլոր այն թերթերն՝ որոնք այդ տեսարանով զբաղեցան, ուրիշ բան չըզտան, բայց եթէ տալ անպայման գրուտիս անոր դղեցիկ և համակրալից ձայնին, չնորհիւ այն ամենալաւ վարժուցին՝ որուն կըհամակերպէ իր երդն, և իր դուսանական տաղանդն։ Մատնանիշ կըլնեն նաև անոր այրական դէմքն և գեղարուեստական կեցուածքը, տեսլարանին վրայ. և ուրախանալ գուշակութիւններ կըլնեն անոր արուեստական ընթացքին համար»։

«Ծաղկանոյշ» (Flora N. 18) կըգրէ. «Դերասանց Վալենտին մէ նորամուտն Բէգլար Ամիրջանեան, որ գիտէ իր հրապուրանօք լի՝ դեղեցիկ և քնքոյշ ձայնին հետ միացնել և ըզդուսանականութիւն, զոր կըպահանջէ երաժշտութիւնն, իբրև Վերջ Դուսոյի։ Պ. Ամիրջանեան՝ երբ ճանչնալու ըլլայ արուեստին բոլոր նպատակներն և գաղտնիքը, պիտի լինի մին յառաջնակարգ վառերգակներէն. որովհետև իր համակրական դիմաց հետ՝ կըղուշտ ուրիշ ձիրքեր ևս։ Բայց թող անայ մեզ՝ ըլլալ միշտ հաւատարիմ թարգման, և չըվատորի չափազանցօրէն խռնուած չրջասիրութեն յառաջ եկած դիւրագրգիռ ծափահարութիւնէն և կամ չառաչ հանող վերջաւորութենէն։ Արուեստն, իրմէ դեռ ուրիշ և աւելի լուրջ բաներ կըպահանջէ. ինքն ևս արուեստով պարտի ներչնչիլ միշտ և անընդհատ։ Ցոյժ բարի են մանաւանդ մրմունջն և Վալենտինի մահը, զոր նա կատարելապէս կըմարմնացնէ իր անձի վրայ»։

Նախընթաց գովեստներէն աւելի նչանակալից և օգտակար ըլլալու են, ըստ իս, մեր տաղանդաւոր երգչին համար այս վերջին խօսքերը. չենք տարակուսիր, թէ նա՝ որ վաստակաւոր մեզի նման դեռ կըշրջի բանաստեղծից և երաժշտաց պարտիզին մէջ, և բոլոր հոգւով հետամուտ է իր արուեստի կատարելագործութեան, այնպիսի քննադատութիւններէ աւելի օգուտ պիտի քաղէ, քան թէ խորչի ընտ։

Լսենք քիչ մըն Ամիրջանեանով յափշտակած Բիոճիայեց՝ հոկտ. 28 ողջերթի համար անոր ձօնած գեղեցիկ ընծայականներէն մին, յորս սրտակեր գովեստիւք կըյայտնեն իրանց լիուլի գոհունակութիւնը։ «Դէթէ և Դուսոյ, որոց վրայ կըհիանայ աշխարհ, ստեղծեցին այս հսկայական գործը՝ որ կըկոչի Վաուասո, որուն դուք, Բէգլար Ամիրջանեան՝ ազնիւ զաւակ Արեւելից, Վալենտինի մասը կատարելապէս ներկայացուցիք՝ դուսանական և երաժշտական արուեստից բոլոր պահանջմանց համաձայն, դոհացնելով և ի խօսուն ծափահարութիւն Ձեզ՝ յափշտակած ժողովուրդը, որ ի Ձեզ աքանչացմամբ կը տեսնէ նըրբաճաշակ և զարգացած արուեստագէտը. Բիոճիա՝ գեղարուեստի դժւար ասպարիզին մէջ մաղթելով Ձեզ արմատնիս և սարդնիս, անմոռաց պիտի պահէ Ձեր քաղցր յիշատակը»։

Բիոճիայէն անցնելով Դոժելու հայկասլ քաղաքը, ուր երեք օր միայն կեցաւ ազնիւ երդիչն, հիացմամբ յիշելու ենք նոյնպէս այն մեծ տպաւորութիւնը, զոր նա թողուց մեր վրայ, իր անուշ կենցաղավարութեամբն և յափշտակիչ երգերով։

Ամենասրբոց ծօնին օրը մեր վանքի մէջ անցուց։ Կէսօրեան՝ ժամը երեքին, հրաւիրեցաւ նա մեծ դահլիճը՝ ճաշակներ տալու համար իր անսովոր ձայնին և արուեստիտութեան. և մենք բաղդ ունեցանք մի ժամ լսել մերթ ընդ մերթ ազգային հակեղեցական երգերու հետ՝ նաև Վաուասի ամենափայլուն կտորները։ Նրա ձայնը երկար երգերով իսկ կարծեք թէ աւելի յագուրդ կուզէ դեռ՝ քան թէ կընուազի։ Ամիրջանեան՝ միայն թատերերգակ գուսան մի չէ, այլ նոյն իսկ սրբազան երգերու քաջարուեստ խօսակ, զոր բոլոր հայկական առանձնայատկութեամբք եւրոպական նոտաներու վերածած է, և յարմար աւելի մի կըսպասէ հրատարակելու համար։

Ձայնը կակուղ է, հաստատուն, զօրաւոր, հնչիւն և յուզիչ։ Աճեցման սանդխոց վերելքին առաջին աստիճանները մեղմօրէն և վառ տոնով կըսկսի, բայց իր նուրբ դպացումէն և արհեստէն առաջնորդած՝ աստիճանաբար երբեմն այնպիսի սաստկութեան կըհասնի, չնորհիւ ամենալաւ միջոցներու, որ կարող է տիրել նոյն

իսկ հարիւրաւոր գոլծիներէ և կոկորդներէ դաշնակաւորեալ համերգ. գոլթեան մի վրայ։ Եւ երբ անոր ուղղարերձ կեցւածքով քաջալանջ կուրծքն ընդարձակուած է և արեւստով բացուած բերանէն արտահոսած ահագին ձայնի ալիքները բոլոր իրանց ընդարձակ ծածանումներովն և եղանակաւորմամբ օդը կըբաղխեն, կըբնանք ըսել, թէ սովորական դահլիճ մի, կամ եկեղեցի չատ նեղ կու գայ անոր. լայնարձակ թատրոն մի հարկաւոր է, որպէս զի առանց զիրար բեկանելու ընդարձակութեան և մեղմանան։

Այս և նման բարեմասնութեամբք աքանչելի արդիւնքներ յառաջ կըբերէ մեր վառերգակը՝ խմբերգի մէջ։ Ձայնի և զղացմանց գերագոյն ուժգնութեան կէտին իսկ բնաւ չի նեղուիր, և ոչ այլ չնչերակաց այտնուումն և արեան դիմեցումն կընկատուին անոր դիմագծերուն վրայ. այլ միայն իր ստանձնած դերին և երգին հոգին է, որ սիրոյ և յափշտակութեան թևերով նկարուած կըտեսնէք անդ։ Ինչպէս ի վերջաւորութեան՝ այսպէս և ի սկզբնաւորութեան երգոյն՝ ջղայնութիւն կամ այլայլութիւն ըսած բանի հետքն անգամ չի տեսնուիր յանձին Ամիրջանեանի. այլ բնութեան և ազատ վայրաց երաժշտին պէս՝ ինքն ևս ազատ համարձակ կըսկսի, կըզարգէ և կըգոլու իր և ընդհանուր երաժշտութեան գայլայլիկները. մանաւանդ եթէ նուագման և պահպանման վայրէջներն ըրած ժամանակ՝ ձայնին փափկութիւնն և նրբութիւնը գոլ աւելի լինէր, չ'ասեն զի իր ձայնը բնութեամբ զօրաւոր լինելով, կարծէք թէ չուզեր դիւրաւ արտահայտել նուաճիլ։ Սակայն և այնպէս այս բանս անհրաժեշտ կըպահանջուի, մանաւանդ մենանուագաց մէջ, ուր ձայնի ամէն եղելութիւններու և կրից զանազան թրթռմանց միակ ներկայացուցիչն՝ երգիչն է։

Սակայն առանց մեր յայտնած վախագին իսկ՝ Վալենտինի մահուան մրմունջին և մեզ ծանօթ Սիթևռնակի մէջ ամենայուզիչ գաղանիքները ցոյց կու տայ նա՝ գոյներու և չարժմանց ճարտար դործածութեամբք։

Ամիրջանեանի ըսածէն գատելով՝ Շահլամեանին հանդիպած պատահական անյաջողութիւնն՝ իրան համար չհաւէտ դաս եղած է. հետևաբար՝ նա որ այսօր առաջնակարգ արուեստագիտի մի դեր կատարելու վիճակին մէջ է, և Շահլամեանէն աւելի առաւելութիւններ կրնթի ունենալ, նոյն իսկ չնորհիւ Մեդիոլանու Երաժշտանոցին, որ Նեապոլսինէն վեր է. բայց և այնպէս չուղէր ինքնավստահութեամբ իսկոյն վերադառնալ ի Ռուսիա։ Նա մտադիր է դեռ ժամանակ մնալ յԵւրոպա, մտնել մայրաքաղաքաց թատերդրաններուն, լսել նչանաւոր հղերերդութիւնները, կարդալ բոլոր թեր ու դէմ քննադատութիւնները. մէկ խօսքով քաղել ամեն օգուտ, և ամենայն կերպով կատարելագործել իր արուեստն, որուն այնքան սիրահարած է և մեծ փոյթ ունի։ Ամիրջանեան՝ այժ 15-էն աւելի ամբողջական թատերդութիւնները *) այնպէս լաւ իւրացուցեր է, որ առանց նախապատարաստութեան իսկ կարող է անվրէպ երգել, կամ ներկայացնել։

Նա դեռ Վենետիկ եղած պահուն ստացաւ մի այլ ներկայացման հրաւէր Մեդիոլանու Երաժշտանոցի կողմէն։ Հետաքրքիր էինք իմանալ, թէ ուր և ինչ հղհինակի գործոմ։ Կերթի, թէ Բիոճիայի մէջ տւած անոր ներկայացումները մէկ կողմէն, և միւս կողմէն ալ օրագրաց տւած լուսի գովեստները՝ մեծապէս նպաստեցին չուտով տաղանդաւոր վառերգակիս համբաւը տարածելու Իտալիոյ մէջ։ Նա չատ կըփափաքէր, որ իրան Վենետիկը վիճակէր. և կը յուսանք, թէ ուշ կամ չուտ համբաւաւոր Ֆենիչէի մէջ ևս կըլսեցնէ իր ձայնը և պատիւ կըբերէ հայ անուան. որուն համար մաղթելով կատարեալ յաջողութիւն, կըմնանք իր վերադարձին։

Բեգլար Ամիրջանեան ազգային առաջին վառերգակն է, որով զբաղեցաւ և պիտի զբաղի իտալական մանուլը, ինչպէս Շահլամեան ալ առաջին վերնաբեմերը Ռուսիոյ մէջ։ Ուրախութեամբ լսեցինք Ամիրջանեանէն, թէ այժմ ազգային ուրիչ **) ուսանողք և ուհիք ևս կըպատրաստուին Մեդիոլանու Երաժշտանոցին մէջ, որոց ոմանք՝ զիլերդակ և ոմանք ալ բամբերդակներ են, և քիչ ժամանակէն պիտի աւարտին իրանց ընթացքն և հասարակաց ներկայացումներու մասնակցին։

Փափաքելի էր՝ որ թուրքահայերն ալ իրախուսած այս փայլուն օրինակներէն, իրանք ևս չամախէին յԵւրոպա՝ նոյն մասնագիտութեան համար, որոց պակասն և պէտքն այնքան զգալի է այսօր՝ հայ թատերաբեմին վրայ։ Իսկ ռուսահայոց,—որոնք աւելի դիւրութիւններ ունին,—խորհուրդ կու տայինք, որ գուսանական երգեցողութեան հետ՝ հաւասարապէս կարևորութիւն տային նաև թատերական դերասանութեան, որուն համար սակայ դանգատներ կըլսուին թերթերու մէջ. որպէս զի հանդուցեալ Ադամեանի այնքան փառաւոր և պարծանօք յաջողուցած գործը՝ ոչ միայն չի նսեմի և մեռնի, այլ մանաւանդ թէ ժամանակիս յառաջադիմութեան պահանջին համաձայն՝ ևս քան զևս զարգանայ յազգիս։

Համոզուած ենք դարձեալ, որ այս ընթացքին հետևելով ոչ միայն հետզհետէ դեռ. ուրիչ ծածուկ հանճարներ ևս պիտի կարենան յերևան գալ, այլ գեղարուեստից և կրթութեան գործն ևս նոր զարկ մի պիտի առնու։

Հուսկ ուրեմն՝ այս առթիւ մեր խօսքն ուղղելով վերոյիշեալ արդէն լաւ պատրաստուած և պատրաստուելիք երգչաց և երգուհիներուն, կառաջարկենք, որ Ռուսաց այս ինչ կամ այն բարձրագոյն ընկերութեան հետ պարտաւորիչ կապերով դեռ չկալչկանդած, միանային ընդ դեկավա-

*) Այսինքն են Faust, Puritani, Traviata, Aida, Carmen, Ernani, Favorita, Forza del Destino, Rigoletto, Africana, —Un ballo in Maschera, Lucia, Trovatore, Ugonotti, Pagliaci e Cavalleria Rusticana.

**) Որոց անուանքն և մասնագիտութիւնները կընշանակենք հոս. Օրիորդ Եղնաբեկեան՝ թէթև զիլերդակ (Soprano leggiero, կամ՝ lirico)։—Արշակ Կոստանդեան՝ վերնաբամբերդակ (Tenore lirico a dramatico)։ ունի ուժգին, քաղցր և հնամաղձ ձայն.—Տարապարտ Ծովակ շատ ուժգին և ոլորերդական վառերգակ (Baritono dramatico)։ Իսկ աւարտողաց մէջ յիշատակութեան արժանի են աւրիորդ Նիւսիկ Շահլամեանի և Ամիրջանեանի՝ նոյնպէս Եղնաբարեան, Ադիրնկեան, Մարգսեան, Վարդիկեան, ասկին Ելենա Զեռաստէ և օրիորդ Յուսիկ Պապայեան։



ԼՐՈՒԹԻՒՆ

րութեամբ Կարա - Մուրզայի, կամ Վահրամ Սուաճեանի, որ ի Վիեննա կատարելագործած է իր երաժշտութիւնն, և վերջերս իբրև նշանաւոր դաշնակահար համբաւ ստացաւ Անգլիոյ մէջ, և գուսանական մի ընտիր խումբ կազմէին ազգային թատերաբեմի համար, գիտնալով որ այս բանս իրանց համար չատ պատւաբեր պիտի լինի և հայ հասարակութեան ընդհանուր գոհունակութեան պատճառ։ Իրօք՝ այսպիսի խմբի մի կազմակերպութիւնն այնու աւելի պիտի դիւրանայ, եթէ գեղարուեստից հետ ազգային պատուոյն նախանձախնդիր հարուստներէն ոմանք՝ դէթ գործին նիւթական վարչութիւնն, այսինքն է դրամական եւմտից մատակարարութիւնք իրանք ստանձնէին, երգչաց հետ կանխաւ պայմանաւորելով, ինչպէս կըտեսնենք յԵւրոպա։ Ազգային ուրիշ թերթերն ևս իրանց կարծիքը կըյայտնեն անշուշտ այս մասին։

Հ. Բ. Ս.

«Բազմավէպ»

—

Օրերումս Թիֆլիսում դերասանական խումբը կըներկայացնէ հրաշալաւոր հայ երգիծաբան Յ. Պատրոնեանի «Բաղդասար աղբար» կամ «Ապահարզան» երեք արարւածով կատակերգութիւնը, որ յարմարցրել են բեմի համար պ.պ. Սարգարեան և Վրոյր։

Պիէսը լի է կենդանի տիպերով և պատկերներով, հետաքրքիր է ու ծիծաղաշարժ,

—

Առաջիկայ հինդշաբթի, ամսոյս 29ին պ. Պետրոսեանը ներկայացնելու է «Օտելլօ»։

—

Այսօր կիրակի երեկոյեան Թիֆլիսի ժողովարանում ջուլֆակահար պատանի Դումչևի կոնցերտն է։ Հետեւեալ անգամ կըհաղորդենք մեր տպաւորութիւնները։

—

*Երաժշտա-գրական երեկոյթը, որ կայացաւ «Թիֆլիսի ժողովարանի» դահլիճում յօգուտ հրէական բարեգործական ընկերութեան, լի էր բազմաթիւ հանդիսականներով և անցաւ շատ աչքի։ Մուտքը հասաւ մինչև 800 րուբլու։*

—

*Ամսոյս 30-ին պ. Կարա-Մուրզան Թիֆլիսում տալու է մի համերգ յօգուտ Ռեմանցից արտաքսուած անհնամ և անտէր աշակերտներին։*

—

## ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Վերջապէս, լոյս տեսաւ գրականական հանդէս «Հորիզոնի» առաջին գիրքը պ. Փիլ. Վարդազարեանցի հրատարակութեամբ։ Ծողովածուի այս հատորը, բացի պ. Շիրվանզադէի «Ցաւագարը» վէպից և նոյն հեղինակի «Րաֆֆիի կեանքից» վերնագրով յօդուածից, որոնց մասին մենք մի անգամ արդէն յայտնել ենք,— պարունակում է իր մէջ հետեւեալ ինքնուրոյն նիւթերը. «Բաջերի կեանքից», «Հին օրհնութիւն», «Մի հառաչանք», «Երկինք և երկիր» և «օր Ն-ին», բանաստ Յ. Թումանեանցի. «Աղքատի կեանքը», «Լեռների հովիտը», պատկերներ նոյն հեղինակի, «Բօրչալուում» և «Խորենացու տեղեչայր Սաթենիկը», նոյն պարոնի։ Թարգմանական նիւթերն են. «Զայլդ Հարօլդի երգը»—Բայրօնից, «Թափառիր»—Հէյնէից, «Հրեշտակ»—Լերմօնտովից և «Մեռաւ իմ Մուսան»— Նադսօնից, «Գրականական շարժումը Ռուսաստանում», «Ֆրանսիական նորագոյն գրականութիւնը, «Գեղարւեստի փիլիսոփայութիւնը», Իպ. Տէնի (Թարգ. Տ. Յովհաննիսեանի) և «Աշխարհի վախճանը և վախճանից յետոյ», ըստ Կ. Ֆլամարիօնի։

Ներկայում, երբ լրագրական մտավաճառ սողուններըը—ճգնում են ապականել գրականութեան առուն (թէև անաջող), ուրախալի է «Հորիզոնի» պէս մի զուտ գրականական հանդիսի երևան գալը։ Յոյսվ ենք, որ գոնէ այս նոր հանդէսը իրան հեռու կըպահի ևս նախանձից այլևայլ փոքրիկ մոքրիկ շանտաժիստների մասնակցութիւնից։

«Հորիզոնը» տալուած է շատ մաքուր և գեղեցիկ թղթի վրայ, գինը՝ 1 րուբլի։

—

## մանր լուրեր

*Հայկական խնդիրն Անգլիայում այժմ առաջին տեղն է բռնում։ Կրօնական ազատնները, մեծ ճնշումն են դործ դնում անգլիական կառավարութեան վրայ, պահանջելով որ խիստ միջոցներ ձեռք առնուի Բ. Դուռն դէմ։*

—

Կ. Պօլսի անգլիական դեսպանը պարզ հասկացրել է սուլթանին, որ Բ. Դուռն այլ ևս չէ կարող յուսալ Կիպրոսի դաշնադրութեան այն կէտի վրայ, որի հիման վրայ Անգլիան պարտաւորւել է պաշտպան լինել նրա իշխանութեան Փոքր-Ասիայում։ Որպէս դի այդ պարտաւորութիւնը պահպանէ իր ոյժը, սուլթանը պէտք է անպատճառ վերջ դնի իրերի այն դրութեան, որ Հայաստանում է կատարւում։ Новости.

—

Անգլիական մամուլի մի քանի օրգանների մէջ տաճիկների Հայաստանում կատարած գազանութիւնները համեմատում են այն բարբարոսական վարմունքի հետ, որ մի ժամանակ գործ էին դնում Միացեալ Նահանգներում Նեգրերի դէմ։ Нов. Вр.

—

Բ. Դուռը վերջնական յամառայնութիւն յայտնեց այն ծրագրների հետ, որ ստացել են իրանց կառավարութիւններից հայկական քննիչ յանձնաժողովին մասնակցող ռուս, անգլիական և ֆրանսիական պատգամաւորները։ «Times»

—

*Հայկական քննիչ մասնաժողովին մասնակցող ռուս, անգլիական և ֆրանսիական ներկայացուցիչներին կատարել իրաւունք է տւած վկաներին հարց ու փորձի ենթարկել և իրանց ստորագրութեամբ վաւերացնել յանձնաժողովի նիստերի արձանագրութիւնները։* Քննութիւնը

պիտի կատարւի միայն Սասունի դաւառի սահմաններում։ Standard։

—

Բիթլիսի վիլայէթում պատահած անցքերի առիթով յարուցւած հայկական խնդիրը ամենևին չէ իջել տպարիզից։ Կ. Պօլսի մէջ գործերի դանդաղ չարժումը հետեւանք է այն բանակցութիւնների, որ սկսել է անգլիական կառավարութիւնը։ Morn. Post։

—

Հաստատ տեղեկութիւններից յայտնի է, որ անգլիական կաբինետը ուղարկել է նոտա եւրոպական կառավարութիւններին՝ դարձնելով նրանց ուշադրութիւնը Հայաստանում կատարւած թիւրքական խստութիւնների վրայ։ Առեղից չատ հոդ է տանում և գործում է անգլօ-հայկական մասնաժողովը, որ պահանջում է մեծ պետութիւնների կողմից ճնշում գործել Թիւրքիայի վրայ և մինչև անգամ նաւատորմ ուղարկել Դարդանել։ Прав. Вѣст.

—

«Մչակի» թղթակիցը Պետերբուրգից դեկտեմբերի 22-ից հեռագրում է, որ «Լոնդոնի «Daily News» լրագիրը ներկայ տարւայ անցքերի տեսութիւնը անելով, ասում է. «Կայսր Ալէքսանդր III-ի քաղաքականութիւնը նախապատրաստեց նոր երեքպետական դաշնակցութիւն, որը կապւեց յատուկ նպատակով, հերթական դարձնելու հայոց հարցը և աչխատելու վերանորոգել թիւրքաց վարչութիւնը Հայաստանում։

«Լրագրի կարծիքով, Ռուսաստանը վերադառնում է թիւրքերից հարստահարւած քրիստոնեաների ազատութեան քաղաքականութեանը, մի քաղաքականութիւն, որին քանակաւն թւականներին հետեւելով նա, Անգլիայի հետ ձեռք ձեռքի տւած ազատեց Ցունաստանը։

«Լէօտիևի ռուսաց էկսպեդիցիան երկիւղ և կասկած է յարուցանում անգլիացիների մէջ։ Կարծում են, որ Ռուսաստանը չի տայ իր համաձայնութիւնը՝ Եգիպտոսը միացնելու անգլիական կօլօնիաներին։

—

«Անգլիական «The Cantemporary Review» ամսագրի յունւարի դրքի մէջ տպւած է Մակկօլի մի յօդւածը, որը երկար ժամանակ միսիոնար է եղել Հայաստանում։ «Новое Время» լրագրի խօսքով, Մակկօ ասում է, որ Անգլիայի աւանդական քաղաքականութիւնը ոչ թէ թշնամութիւն է եղել Ռուսաստանի հետ, այլ բարեկամութիւն, մինչև Կրիմի պատերազմը։ Հնդկաստանը հարկաւոր չէ Ռուսաստանին. Կ. Պօլսին տիրելը չի ուժեղացնի ռուսաց յարձակողական միջոցները Հնդկաստանի վրայ, ընդհակառակն, անգլիական չահերը պահանջում են, որ Բօսֆորը անցնի Ռուսաստանի ձեռքը։

—

Վիէննայից հեռագրում են. «Այստեղի դիպլօմատիկական շրջաններում յայտնի պարձաւ, որ երեքպետական դաշնակցութեան պետութիւնները կընդառաջեն այն պետութիւններին, որոնք նախաձեռնութիւն են յանձն առել կանոնաւորելու Հայաստանի դրութիւնը»։

—

Լոնդոնից «Ժէյտերի գործակալութեանը հեռագրում են դեկտեմբերի 17-ից. «Այսօր Գլադստոնը, իր ծննդեան օրւայ 85 ամեայ տարեդարձի առիթով, բազմաթիւ շնորհաւորութիւններ ստացաւ Լոնդոնում, ընդունեց և հովարդենում և Պարլիզում ապրող հայերի պատգամաւորութիւնը, որոնք մատուցին մի ոսկեզօծած սկիհ հովարդենեան եկեղեցու համար ի յիշատակ այն համակրութեան, որ Գլադստոն տածում է դէպի հայերը։ Գլադստոն ասեց որ եթէ ինքն մինչև այժմ ոչինչ բան չարեց հայերի համար, դա ոչ թէ անտարբերութիւնից էր, այլ այն պատճառով, որ չըպէտք է նախօրօք վճռել թէ հաղորդած տեղեկութիւնները ճիշտ են, պէտք է առաջ սպասել քննութեանը։

Իսկ եթէ այդ տեղեկութիւնները ճիշտ կըդուրս գան, այն ժամանակ պէտք է ընդհանուր աղաղակ բարձրացնել և անէծքներ թափել այդ անասնատւած գործողութիւնների դէմ և ստիպել սուլթանին զղալ իր վարմունքի անմտութիւնը։ Մի կառավարութիւն, որ թոյլ է տալիս այդպիսի բռնութիւններ, նախատինք է մարգարէ Մահմէդի համար, քաղաքակրթութեան համար։ «Թանի որ ես ձայն ունեմ,—ասաց Գլադստոն վերջաբանութեան մէջ,—ես կը դործադրեմ այդ ձայնը յօգուտ մարդկութեան»։

—

«Մինիսարների վերջին խորհրդում որ գումարւած էր պալատում, Կ. Պոլսում, ակզբունքով ընդունած է մի նախագիծ, որով Երզրումի, Վանի, Բիթլիսի և Մուշի վիլայէթներից պէտք է կազմւի մի վիլայէտ, սուլթանից նշանակւած նահանգապետից 5 տարով։

«Առաջին նահանգապետը պէտք է լինի մահմեդական, իսկ հետեւեալ նահանգապետները կընշանակւեն քրիստոնեաներից, բայց ոչ հայերից։

«Տեղական ժանդարմերիան կըլինի սուլթանից նշանակւած դիւղիպայի պետերի հրամանատարութեան տակ։

«Վիլայէտից ստացւող եկամուտները կըգործադրւեն տեղական կարիքների համար, ի բաց առնելով մի յայտնի գումար, որ պէտք է մտնի պետական պարտքի վարչութեան կամ ծխախոտի բէժիի մէջ։

«Դատաւորները ընտրովի կըլինեն ի բաց առնելով դատարանների նախագահները, որոնք կընշանակւեն այժմ գոյութիւն ունեցող օրէնքների հիման վրայ»։

—

Կ. Պօլսից դեկտեմբերի 22-ին հեռագրում են Հիւսիս. դործակալ. Բիթլիսի նահանգապետ Թաքսին-փաշան, որը դեկավարում էր Սասունի բնակիչների դէմ ձեռք առած գործողութիւններին, սպանւեց մի հայի ձեռքով։ Սպանող հայը ձերբասպանութիւն գործեց։ Բիթլիսում հայերը սաստիկ կատաղած են իշխանութիւնների գործունէութեան եղանակից և պատրաստ են այժմ դիմել։ Կ. Պօլսում հեռագիր է ստացւած, որ քիւրդերը յարձակում գործեցին Էդինի վրայ, Երզնկայի չրջանում։

—

«Մչակի» Կ. Պօլսի թղթակիցը գրում է «Իզմիրլեանի ընտրութիւնը այնքան կարեւոր իրողութիւն մը սեպւած է որ Կ. Պօլսի անգլիական դեսպանը իսկոյն հեռագրած է այդ մասին արտաքին գործոց նախարարին»։

—

Պաշտօնական լուր կայ, որ Սմիւռնայի Շեխլէյն, այժմեան բրիտանական Մօնտոյի փոխ-հիւպատոսը, Հայաստանում կատարուած բարբարոսութիւնների գործը քննող մասնախմբի նախագահ է ընտրուած։

—

Զէյթուն-փաշային շքանշան շնորհելը դրաւել է բոլորի ուշադրութիւնը։ Մեծ սուլթանը կարող էր ընծայ տալ մի այնպիսի մարդու, որը այնպիսի բարբարոսութիւններ է կատարել Հայաստանում։

Գերմանական կեօլնի լրագրի և Պօլսի Թաղթակիցը ասում է. «Զէյթուն-փաշային շքանշան նշանակելը, ելել է նոյեմբերի վերջին և հետևաբար է փաշայի վերջին «հերոսական արշաւանքներին»։ Իսկ Թիւրքաց կառավարութիւնն ասում է, որ երբ Թէ նոր շքանշանը բոլորովին համապատասխանէ Զէյթուն-փաշայի գիւղորական գործերին։ Այս պատճառաբանութիւնը բոլորովին անհիմն է, որովհետև Զէյթուն-փաշան չի պատկանում Թիւրքաց յայտնի «զօրավարների» խմբին, և սա պէտք է նաև կոտորէր մի քանի հազար հոգի, որ ասա սրա անունը «յայտնի» դառնար։

—

Կ. Պօլսից հաղորդում են Լոնդոնի լրագրներին, որ երզրում ռուսաց, ֆրանսիական և անգլիական հիւպատոսները երբեք անձամբ չեն դնալու Սասուն մասնակցելու Հայաստանում կատարած բարբարոսութիւնների գործը քննող մասնախմբին, այլ պիտի ուղարկեն պատգամաւորներ, որոնք միայն պիտի հսկեն Թրքական քննող մասնախմբի գործունէութեան վրայ, բայց բոլորովին չըպիտի խառնուեն այդ մասնախմբի ոչ գործերին, ոչ էլ նրա կազմած հաշիւներին։ Մասնախմբի նիստերը հաւանական է, որ կայանան Մուշում։

—

Ասում է, որ Թիֆլիսը սրտատրոփ սպասում էր վերհասու Հայրիկի այցելութեանը։ Այժմ լսւում է, որ վաղը ամսոյս 26-ին երկուշաբթի առաւօտեան առանձին գնացքով Ազատ-փայից կըժամանէ բաղաքս։

—

Ամսոյս 19-ին, երկուշաբթի օրը, Խօլճանքում կատարուեցաւ Հոգևոր-դպրաց՝ Հանգուցեալ Գրիգոր Արծրունու մահուան երկրորդ տարեդարձի առիթով։ Այդ օրը Խօլճանքի եկեղեցում հանդիսաւոր յիշատակի համար պատարագ մատուցեցաւ։ պատարագիչն էր գերապատիւ Տէր Պետրոս Սահակեանն, որ պատարագ էր յետոյ մի շատ սրտառուչ քարոզ խօսեց Գրիգոր Արծրունու գործունէութեան մասին։

—

Այսօր, երեկոյեան ժամը 7-ին քաղաքային խորհրդարանի դահլիճում կայանալու է Բարեգործ. Ընկ. ընդհանուր ժողովը։

—

Պետերբուրգի դումայի, ընտրեց հաղորդում են լրագրները, վճռել է յանձնել ֆրանսիական պատգամաւորին մի գիրք՝ հայերի ցաւակցութիւնը և վճռել է դահլիճում կանգնեցնել արձանի կիսաքանդակ։

—

## ԱՅՆ ԱՅՆՔ

Եմիլ Զօլային Հռոմում պատրաստելու համար ընդունելութեան համար շատ արիստոկրատական ընտանիքներ անհրաժեշտ դամակներ են տալել, որոնց մի քանիսը ուժ են նրանից, եմիլ Զօլային պիտ հերքեր և անբարոյական մարդուն համարձակուել են ընդունել և ձեռք սեղմել։

—

Երաժշտագէտ Զ. Վերդին հաւաքել է իր տասը միլիոն ֆրանկ կարողութիւնը մի ապահովագրան շինելու՝ 200 դառամեայ երգիչների և երաժիշտների համար։

—

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Բաժանորդ. Դ. Հ. Չինք տալագրելու՝ նրանք, որոնք տուրքը գոբան էլ շահատաժ են ուզում գործելու, նրբանք, որոնք երանց ամրողջ անցկալով մի գաղափար գործը են, այդպիսիներին արհամարհանքն էլ շատ շատ է։

Խմբագիրը Հրատարակիչ
ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

ԲԱՑՒԱԾ Է 1895 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐ.

ԱՐԱՐԱՏ

Կրօնական, բարոյական, պատմական, բանասիրական և ազգային ամսագիր. տարեկան գինը 4 ր.

Հասցէն՝ Вагаршапатъ, редакція жур. „Араратъ“.

VII Г. НОВОЕ ОБОЗРѢНІЕ VII Г.

ежедневная газета

условія подписки съ доставкой и пересылкой

На 12 м. 10 р., на 6 м. 6 р. на 3 м. 3 р. 50 к. на 1 м. 1 р. 50 к., заграницу 17 р., на полгода 9 р. Подписка и объявленія принимаются въ конторѣ „Нов. Обозр.“ Тифлисъ. Барятинская ул. д. №8

ՄՈՒՐՃ

Ամսագիր—է. տարի, 1895։
Բաժանորդագինն է՝ 10 րուբլի։
Հասցէն՝ Тифлисъ, редакція журнала „МУРЧЪ“. TiflisR, édaction de la revue „MURTCH“.

23-րդ տ. ՄՇԱԿ 23-րդ տ.

Գրականական և քաղաքական լրագիր, հրատարակւում է Թիֆլիսում նոյն ուղղութեամբ։ Մշակի տարեկան գինը 10 ր., կէս տարւանը 6 ր., ամսական 1 ր։

Հասցէն՝ Тифлисъ. ред. „Мшакъ“ Tiflis, Réd. du journal arménien «Mschak».

50 Г. КАВКАЗЪ 50 Г.

Редакторъ-издатель Ю. П. МИЛЮТИНЪ

подписная цѣна

| | город. | иногород. | заграниц. |
|---|---|---|---|
| На годъ | 11 р. 50 к. | 13 р. | 18р. 40 к |
| „ 6 мѣс. | 6 „ | 7 „ | 10 „ |
| „ 1 „ | 1 „ 50 | 1 „ 75 к. | 2 „ |

Подписка и объявленія принимаются въ конторѣ „Кавказа“, Тифлисъ, Дворцовая ул. д. Т. Дворян. З. банка.

ԲԱԶՄԱՎԷՊ

Ամսագիր—ԾԳ. ՏԱՐԻ. 1895։
Բաժանորդագինն է՝ 10 ֆր. (4 ր.)
Հասցէն՝ Rédaction de la Revue «BASMAVEP» Venise (Italie), St. Lazare.

ՄԱՄԻՍ

Երկշաբաթաթերթ։—ԽԴ. տարի, 1895։
Բաժանորդագինն՝ 50 դրուշ։
Հասցէն՝ Յովհ. էֆ. Արամեան, կենդրոնական գրատուն, Կ. Պոլիս, Զաքմագճըլար թիւ 53։

Թ.տ. ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ Թ.տ.

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ

Հրատարակութիւն Վիէննայի Մխիթարեան ուխտի։

Տարեկան 10 ֆռ., Ռուսաստանի համար 4 ր., 6 ամիս 2 ր. 50 կ., ամիսը 50 կ.

Հասցէն՝ Rédaction de la Revue „Handess“. Vienne. VII|2 Mechitaristengasse, 4.

ՀԱՅՐԵՆԻՔ

Օրագիր.—ԻԶ. տարի, 1895։
Բաժանորդագինն է՝ (300 Թուոյ համար) 25 ֆրանկ։
Հասցէն՝ Rédaction du journal „HAYRENIK“ Galata, Constantinople (ancien local de la Banque Imp. Ottomane).

# ГОДЪ X-Й ЗВѢЗДА ГОДЪ X-Й

ИЛЛЮСТРИРОВАННАЯ ХРОНИКА ТЕКУЩИХЪ СОБЫТІЙ ЕЖЕНЕДѢЛЬНЫЙ ХУДОЖ.-ЛИТЕРАТУРН. ЖУРНАЛЪ

СЪ ПРИЛОЖЕНІЕМЪ КНИГЪ ЕЖЕМѢСЯЧНАГО ЛИТЕРАТУРНАГО ЖУРНАЛА

Журналъ „ЗВѢЗДА“ поставилъ своею главною задачею быть **ИЛЛЮСТРИРОВАННЫМЪ ОБОЗРѢНІЕМЪ** текущихъ политическихъ и общественныхъ событій, отмѣчая въ иллюстраціяхъ, рисункахъ, портретахъ и проч. всякое выдающееся явленіе каждой страны, отдавая при этомъ первое мѣсто отечественной русской жизни.

Важнѣйшимъ событямъ будутъ посвящены экстренные №№

Художественнымъ отдѣломъ завѣдываетъ художникъ В. П. Овсяниковъ.

ПОДПИСНАЯ ЦѢНА: **5 РУБЛЕЙ** безъ доставки. **ШЕСТЬ РУБЛЕЙ** съ доставкою и пересылкою во всѣ города Россійской Имперіи. Допускается разсрочка: при подпискѣ 2 р., къ 1 Мая 2 р., и—1 Сентября остальные.

**52** ЕЖЕНЕДѢЛЬНЫХЪ №№ каждый въ 24 страницы журнальнаго формата СЪ ИЛЛЮСТРАЦІЯМИ.

**12** КНИГЪ ЕЖЕМѢСЯЧНАГО ЛИТЕРАТУРНАГО ЖУРНАЛА каждая книга объемомъ болѣе 240 стр. больш. форм.

**12** №№ МОДНАГО ЖУРНАЛА въ годъ до 500 рис. съ прилож. ДВѢНАДЦАТИ ЛИСТОВЪ выкроекъ, узоровъ и вышив.

## Въ 1895 г. въ журналѣ «ЗВѢЗДА» будутъ напечатаны слѣдующія произведенія:

Соловьевъ, Всев. Серг.—Истор. повѣсть „Недоразумѣніе“.
Полонскій: Я. П.—„Изъ воспоминаній“.
Маминъ-Сибирякъ.—Повѣсть.
Ясинскій, І. І.—Повесть „Три портрета Пелагеи Ивановны“.
Потапенко, И. Н.—Пов. „Гордость семьи“.
Баранцевичъ. К. С.—Повѣсть.
Пронскій, Сергѣй,—Фантастическій разсказъ „Мраморная роза“.
Мережковскій, Д. С.—Статья „Новый идеализмъ“.
Гиппіусъ, З. Н.— Разсказъ „Зло“.
Фофановъ, К. М.—Разсказъ „Рога“.
Каразинъ, Н. Н.—Разсказъ „Честь возстановлена“.
Бѣжецкій, А. Н. (Масловъ)—Повѣсть.
Тихоновъ. В. А.—Пов. „Ликошниковъ.
Коропчевскій, Д. А. (Таранскій)—Романъ „Любовь- призракъ“.
Чюмина, О. Н.—Ром. „Молодые побѣги“.
Зарinъ, А. Е. Романъ „Исторія одного гардероба“.
Елисѣевъ, А. В. Д-ръ. Очерк. „По Японіи“.
Сафоновъ, С. А.—Поэма „Призраки“.
Максимовъ. А. Я.—Разсказъ. „Не судилъ Богъ“.
Леманъ, А. И.—Романъ „Темныя силы“.
Свѣтловъ, В. А.—Повѣсть „Ядъ Локусты“.
Астафьевъ, С. Л. Историч. романъ „Сандомирская панна“.

А также стихотворенія: *Полонскаго, Я. П. Майкова, А. Н. Фофанова, К. М. Величко, В. А. Мережковскаго, Д. С. Михаловскаго, Д. Л. Льдова, К. Л. Сафонова, С. А. Талина, Ф. Е.* и другихъ.

**12 КНИГЪ ПРИЛОЖЕНІЙ**

БУДУТЪ ЗАКЛЮЧАТЬ ВЪ СЕБѢ:

**ДВѢНАДЦАТЬ ИЗБРАННЫХЪ РОМАНОВЪ**

**лучшихъ иностранныхъ авторовъ всѣхъ странъ:**

Франція—Альфонсъ Додэ.—„Приключенія Тартарена изъ Тарасконы“.
Англія.—Уилькъ Колзинзъ.—„Лунный камень“.
Германія.—Георгъ Эберсъ—„Слово“.
Швеція и Норвегія.—Бьернстернъ-Бьернсенъ.—„На Божьемъ пути“.
Данія.—Іонасъ Ли.—„Современная Ніобія“.
Венгрія.—Мавръ Іокай.—„Божья воля“.
Польша.—Елиза Ожешко.—„Миртала“.
Италія.—Габріэлъ Анунцію.—„Невинная жертва“.
Испанія.—Сервантесъ—„Донъ-Кихотъ“. Полный переводъ въ 2-хъ книгахъ.
Америка.—Маркъ Твенъ.—„Приключенія Фина Гипперберпна“ и наконецъ.

**РОСКОШНЫЙ АЛЬБОМЪ**

Съ иллюстраціями ДОРЭ, представляющій собою

**Собраніе басенъ ЛАФОНТЕНА,**

отпечатанный на веленовой бумагѣ, въ форматѣ журнала „ЗВѢЗДА“, въ переводахъ: Крылова, Измайлова, Димитріева, Хемницера, Мережковскаго, Лихачева. Коринфскаго, Силина, Зарина и друг.

Контора и редакція журнала «ЗВѢЗДА» Спб. Стремянная ул., собств. д. № 12.

Завѣдывающій литературною частью *А. Е. Зарinъ.* За редактора издатель *Петръ Сойкинъ.*

# ЖИВОПИСНАЯ РОССІЯ

Отечество наше въ его земельномъ, историческомъ, племенномъ, экономическомъ и бытовомъ значеніи. Полное описаніе Россійской Имперіи въ 12-ти большихъ переплетенныхъ томахъ in-folio

Подъ редакціей сенатора П. П. Семенова, вице-предсѣдателя Императорскаго Русскаго Географическаго Общества.

Значеніе этого капитальнаго изданія, способъ полученія его подписчиками „Нови“ безплатно и порядокъ, въ которомъ высылаются томы „ЖИВОПИСНОЙ РОССІИ“:

**I. Значеніе „Живописной Россіи“.**

ЗАДУМАННОЕ подъ заглавіемъ „Живописная Россія“, обширное художественно-литературное описаніе Россіи было дѣломъ горячаго стремленія къ тому, чтобы доставить каждому русскому искренно любящему свое отечество, полную возможность ознакомиться съ Россіею во всемъ разнообразіи проявленій ея внутренней и внѣшней жизни.

Основная цѣль изданія—насколько ее возможно выразить въ немногихъ словахъ, состояла въ томъ, чтобы дать яркое изображеніе живымъ словомъ и рисункомъ разно-

образнѣйшихъ картинъ природы нашего необъятнаго отечества, а равно—и типовъ населяющихъ его разноплеменныхъ народностей; описать ихъ нравы, одежды и жилища; очертить ихъ бытъ, промышленность, торговлю и все вообще экономическое положеніе; познакомить съ ихъ вѣрованіями, преданіями, былинами, пѣснями и разными другими проявленіями духовной жизни. Все это, понятно, требовалось освѣтить исторически, т. е. въ прошломъ и настоящемъ, обязательно притомъ въ общедоступной формѣ.

Такимъ образомъ, и по общей программѣ, и по способу исполненія, „Живописная Россія“ безспорно представляетъ изданіе безпримѣрное въ міровой литературѣ Несравненно легче, конечно, издать „Живописную Германію“, Францію“, „Англію“ или „Италію“, чѣмъ „Живописную Россію“. Тамъ мы находимъ массу готоваго матеріала, художественнаго и литературнаго. Значитъ, стоитъ только рѣшиться на затраты, собрать этотъ матеріалъ, поручить группировку его двумъ-тремъ талантливымъ сотрудникамъ—и изданіе обезпечено.

Совсѣмъ иного рода дѣло представляетъ собою изданіе „Живописной Россіи“. Чтобы описать такую колоссальную страну, какъ Россія, слишкомъ мало притомъ изученную,—недостаточно усилій нѣсколькихъ самыхъ опытныхъ писателей. По этому къ участію въ составленіи „Живописной Россіи“ пришлось привлечь целые десятки знатоковъ отдѣльныхъ мѣстностей, а равно и всѣ лучшія литературныя, ученыя и художественныя русскія силы. Для изученія же нѣкоторыхъ мѣстностей Россіи приходилось даже спеціально отправлять на мѣсто людей, отъ которыхъ можно было ожидать всесторонняго и талантливаго исполненія порученнаго имъ дѣла.

Когда значительная доля всего литературнаго матеріала для „Живописной Россіи“ была уже собрана; когда этотъ матеріалъ представлялъ собою десятки картоновъ, а матеріалъ художественный занималъ уже цѣлую комнату—предстояло еще сдѣлать изъ всего этого строгій выборъ, соотвѣтствующій достоинству самаго труда, а затѣмъ привѣсти отдѣльныя части его въ должное соотвѣтствіе, поставить ихъ въ тѣсную связь другъ съ другомъ. „Живописной Россіи“ нуженъ былъ редакторъ, которому бы такая громадная работа была по силамъ. Эту тяжелую работу принялъ на себя сенаторъ П. П. Семеновъ, вице-предсѣдатель Императорскаго Русскаго Географическаго Общества, извѣстный своими научными трудами. Можно смѣло сказать, что никто въ Россіи не могъ бы лучше его посодѣйствовать осуществленію идей „Живописной Россіи“ и ея воплощенію въ видѣ обширнаго, правильно сгруппированнаго труда.

**II. Способъ полученія всѣхъ 12-ти томовъ „Живописной Россіи“ подписчиками „Нови“ БЕЗПЛАТНО.**

Такъ явилось на свѣтъ Божій единственное въ міровой литературѣ изданіе „Живописной Россіи“, дающее полную возможность каждому, желающему знать свое отечество, познакомиться съ нимъ во всѣхъ его подробностяхъ. Исполнивъ это патріотическое дѣло, издатели „Живописной Россіи“ пошли еще дальше въ отношеніи содѣйствія русскимъ людямъ къ ознакомленію со своимъ отечествомъ: они выдаютъ ДАРОМЪ это капитальнѣйшее и единственное во всей европейское литературѣ изданіе, необходимое каждой истинно русской семьѣ, но которое большинству недоступно было до сихъ поръ, въ виду высокой стоимости его, такъ какъ продажная цѣна каждаго тома въ переплетѣ и съ пересылкою 25 руб., цѣна же всѣхъ 12-ти томовъ 300 руб. Для того, чтобы получить БЕЗПЛАТНО полное изданіе „Живописной Россіи“, необходимо лишь быть подписчикомъ „Нови“ ВЪ ТЕЧЕНІЕ ШЕСТИ ЛѢТЪ, ПРИЧЕМЪ БЕЗРАЗЛИЧНО, какого именно года началась подписка—съ 1893, 1894 или 1895 г. Въ каждомъ новомъ подписномъ году подписчики „Нови“ получатъ БЕЗПЛАТНО по двѣ книги „Живописной Россіи“ въ одинаковыхъ роскошныхъ переплетахъ, пока въ ихъ руки БЕЗПЛАТНО не перейдутъ всѣ 12 томовъ этого колоссальнаго изданія. т. е. полнаго описанія всего нашего отечества.

**III. Порядокъ, въ которомъ высылаются томы „Живописной Россіи“ подписчикамъ „Нови“, и разъясненіе редакціи лицамъ, желающимъ получать томы въ послѣдовательномъ порядкѣ ихъ нумераціи.**

Каждый изъ 12-ти томовъ „Живописной Россіи“ представляетъ собою вполнѣ самостоятельное, законченное описаніе одной какой либо обширной территоріи Россійской Имперіи. Въ общемъ, какъ извѣстно, Имперія наша подраздѣляется на двѣ главныя части, довольно рѣзко отличныя другъ отъ друга: на центральную часть и окраины. Въ виду того, что окраины подвержены наиболѣе быстрымъ измѣненіямъ, да при томъ еще наиболѣе извѣстны русскому отечеству,—въ порядкѣ выпуска въ свѣтъ книгъ „Живописной Россіи“ оказалось необходимымъ отдать предпочтеніе окраинамъ, передъ центральною частью Имперіи. Вотъ причина, почему первыми изъ числа изданныхъ и высылаемыхъ подписчикамъ „Нови“ книгъ являются, между прочимъ, томы, посвященные Финляндіи, Прибалтійскому краю, Кавказу, Западной и Восточной Сибири и Русской Средней Азіи. Общій же порядокъ нумераціи всѣхъ 12-ти томовъ основанъ конечно, на географическомъ и политическомъ подраздѣленіи Россіи, но это не имѣетъ никакого значенія въ отношеніи содержанія отдѣльныхъ томовъ, потому что каждый изъ нихъ представляетъ собою—какъ сказано выше—совершенно самостоятельное и законченное цѣлое.

Въ виду разъясненныхъ обстоятельствъ, подписчики „Нови“ получаютъ томи „Живописной Россіи“ не въ послѣдовательномъ порядкѣ ихъ нумераціи, не по порядку нумеровъ съ 1-го до 12-го, а по очереди ихъ выпуска въ свѣтъ: т.-е. сначала описаніе малоизвѣстныхъ окраинъ Россіи, а затѣмъ уже описаніе центральныхъ губерній. Въ отношеніи-же высылаемыхъ подписчикамъ томовъ въ редакціи ведется самая тщательная регистрація, такъ что никакой ошибки произойти не можетъ, и каждый подписывающійся въ теченіе шести лѣтъ на „Новь“ получитъ исправно полное изданіе „Живописной Россіи“, т.-е. всѣ 12-ть томовъ.

